ՀԱՎԱՏՔ, ՈՐԸ ՀՊՎՈՒՄ Է ՀԻՍՈՒՍԻՆ

ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ. ՄԱՐԿՈՍ 5.21-34

21 Երբ Հիսուսը նավով դարձյալ լճի մյուս կողմն անցավ, նրա շուրջը շատ ժողովուրդ հավաքվեց: Եվ նա լճի ափին էր: 22 Եվ ահա ահա մի իշխան եկավ, անունը՝ Հայրոս: Երբ Հիսուսին տեսավ, նրա ոտքերի առաջ ընկավ. 23 նրան շատ էր աղաչում և ասում. Աղջիկս մահամերձ է: Արի՛, ձեռքդ վրա՛ն դիր, որպեսզի բժշկվի ու ապրի: 24 Եվ Հիսուսը գնաց նրա հետ: Նրան մեծ բազմություն էր հետևում, որը և նեղում էր նրան:

25 Մի կին կար, որ տասներկու տարի արյունահոսություն ուներ: 26 Նա բազում բժիշկների կողմից շատ էր չարչարվել, իր ամբողջ ունեցվածքը վատնել ու ոչ մի օգուտ չէր ստացել, ընդհակառակը, ավելի էր վատացել:

ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

- *Նա տառապում էր արյունահոսություն քրոնիկ հիվանդությամբ, որ իրեն դարձրել էր **ֆիզիկապես տկար**, **հասարակությունից մեկուսացած**, և **հոգեպես մահացած** (տես՝ Ղևտ. 15.25-27):*

  Իսկ նրա ավագ որդին դաշտում էր: Մինչ գալիս էր, մոտեցավ տանը, երգերի ու պարերի ձայն լսեց: Իր մոտ կանչելով ծառաներից մեկին՝ հարցրեց, թե ի՞նչ է այդ: Նա էլ ասաց նրան. "Եղբայրդ եկել է, հայրդ էլ պարարտ եզ մորթեց, որովհետև նրան ողջ և առողջ ընդունեց (Ղուկաս 15.25-27):

  Բայց պետք է ուրախ լինել ու խնդալ, որովհետև քո այս եղբայրը մեռած էր ու կենդանացավ, կորած էր ու գտնվեց (Ղուկաս 15.32):

- *Ըստ Օրենքի՝ նա համարվում էր **անմաքուր**, չէր կարող մասնակցել երկրպագության, և որևէ մեկը չէր կարող նրան դիպչել:*

- *Նա ամբողջ ունեցվածքը վատնել էր բժիշկների վրա, սակայն վիճակը ավելի էր վատացել (Մարկոս 5.26):*

*27 Երբ Հիսուսի մասին լսեց, ամբոխի միջով նրա հետևի կողմը եկավ և Հիսուսի հագուստի քղանցքին դիպավ, 28 **<u>որովհետև</u>** **<u>ասում էր</u>**. Եթե միայն նրա հագուստին դիպչեմ, կբժշկվեմ:*

I. ՆՐԱ ՍՐՏԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ (ՀՌ. 10.10,17)

- ***Երկու բան պատահեց այս կնոջ կյանքում, որպեսզի նրա հավատքն ակտիվանա:***

ԱՐԱՋԻՆԸ ԼՍԵԼԸ.

*23 նրան շատ էր աղաչում և ասում. Աղջիկս մահամերձ է: **<u>Արի՛, ձեռքդ վրա՛ն դիր</u>**, որպեսզի բժշկվի ու ապրի: 24 Եվ Հիսուսը գնաց նրա հետ: Նրան մեծ բազմություն էր հետևում, որը և նեղում էր նրան:*

*28 Այս կինը ասաց. **Եթե միայն նրա հագուստին դիպչեմ**, կբժշկվեմ:*

Նա հետևից մոտեցավ, Հիսուսի հագուստի քղանցքին դիպավ (Ղուկաս 8.44):

ԵՐԿՐՈՐԴԸ ԽՈՍՔԸ.

...Պիտի ծագէ արդարութեան արեգակը, եւ բժշկություն պիտի լինի նորա թեւերի վրա (Մաղաքիա 4.2)

Մատ. 14.35-36 - 35 Եւ այնտեղի մարդիկը նորան ճանաչելով, ուղարկեցին բոլոր շրջակայքը եւ ամեն հիւանդները նորա մօտ բերին: 36 Եւ նորան աղաչում էին՝ որ միայն նորա հանդերձի ծայրին դիպչեն. եւ նորանք որ դիպան, բժշկվեցին:

- *Շատերը այսօր **հոգևոր արյունահոսության մեջ են**: Կորցնում են իրենց խաղաղությունը, ուրախությունը, հավատը: Փորձել են ամեն բան՝ բացի Հիսուսից:*

- *Այսօր ժամանակն է քո հպվելու Հիսուսին:*

II. ՀԱՎԱՏՔԸ ՔՈ ՍՐՏԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆՆ Է՝ ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ ԴՐՍԻ ՎԿԱՅՈՒԹՅԱՄԲ:

*29 Եւ շուտով նրա արյունահոսությունն անմիջապես դադարեց, և **իր մարմնի մեջ զգաց**, որ իրեն տանջող հիվանդությունից բժշկվեց: 30 Հիսուսն էլ միևնույն ժամանակ **իր ներսում զգաց**, որ իրենից զորություն դուրս եկավ:*

- ***Հավատքը չի սահմանափակվում միայն մարդու ներսում եղած հույզերով կամ մտքերով: Այն դառնում է լիարժեք, երբ արտահայտվում է խոսքերով, արարքներով և կյանքի վկայությամբ:***

*Նա դեպի բազմությունը դարձավ ու ասաց. **Ո՞վ դիպավ իմ հանդերձին**: 31 Նրա աշակերտներն ասացին նրան. Տեսնում ես, որ բազմությունը քեզ նեղում է, և հարցնում ես՝ Իմ հագուստին ո՞վ դիպավ: 32 Բայց նա շուրջն էր նայում, որ այդ բանն անողին տեսնի: 33 Այդժամ կինը, իմանալով այն, ինչ իրեն պատահեց, վախեցած ու դողալով եկավ, նրա առաջ ընկավ և ամբողջ ճշմարտությունն ասաց նրան: 34 Հիսուսն ասաց նրան. Դո՛ւստր, քո հավատը քեզ փրկեց. գնա՛ խաղաղությամբ ու քո հիվանդությունից բժշկվա՛ծ եղիր:*

Քո հավատը քեզ փրկեց

Գնա՛ խաղաղությամբ

Քո _____ բժշկվա՛ծ եղիր

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ